

**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2021-2022 ուստարի)**

12-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

1. Ե՞րբ է հայերենն անջատվել հնդեվրոպական ընդհանրությունից. 0,5 մ.  
 ա/ Ք. ա. XVIII դ. բ/ Ք. ա. IV հազարամյակի սկզբին  
 գ/ Ք. ա. IV հազարամյակի վերջին դ/ Ք. ա. IV հազարամյակի առաջին կեսին
  2. Ո՞վ է հայոց թագավոր Տիրանին ձերբակալած Ատրպատականի մարզպանը. 0,5 մ.  
 ա/ Սանեսան բ/ Տուղրիլ  
 գ/ Վարազ դ/ Վարդգես
  3. Որտե՞ղ է հաստատվել հայոց կաթողիկոսական աթոռը 1441 թ. 0,5 մ.  
 ա/ Սիս բ/ Ս. Էջմիածին  
 գ/ Անավարզա դ/ Կարս
  4. Ո՞վ է 1830 թվականից ղեկավարել Հայկական մարզը. 0,5 մ.  
 ա/ Բարսեղ (Վասիլ) Բեհրուֆով բ/ Սահակ Մելիք-Աղամալյան  
 գ/ Ալեքսանդր Ճավճավաձե դ/ Բեհրուֆ Շելկովնիկով
  5. Ո՞ր թվականին է Երևանի նահանգը տրոհվել յոթ գավառների. 0,5 մ.  
 ա/ 1874 թ. բ/ 1870 թ.  
 գ/ 1867 թ. դ/ 1866 թ.
  6. Հայ ազգային ավանդական քանի՞ կուսակցություն է գործել Հայաստանի առաջին հանրապետությունում. 0,5 մ.  
 ա/ 3 բ/ 6  
 գ/ 5 դ/ 8
  7. Ո՞ր թվականին է դատապարտվել «Նոր եկեղեցի» կառույցի պառակտիչ գործունեությունը. 0,5 մ.  
 ա/ 1836 թ. բ/ 1926 թ.  
 գ/ 1890 թ. դ/ 1938 թ.
  8. Ե՞րբ է համաձայնություն ձեռք բերվել «Արևելյան լեգեոն» ստեղծելու մասին. 0,5 մ.  
 ա/ 1914 թ. բ/ 1916 թ.  
 գ/ 1915 թ. դ/ 1918 թ.
  9. Ե՞րբ է մահացել Կիլիկիայի վերջին հայ թագավորը: 0,5 մ.
  10. Ո՞ր դարում է վերջին անգամ հիշատակվել Հայասան: 0,5 մ.
  11. Ո՞վ է Փետրվարյան ապստամբության օրերին գլխավորել ապստամբական ուժերը: 0,5 մ.
  12. Որքա՞ն էր կազմում Հունաստանի «Ազատություն» ջոկատում կռվող հայորդիների թիվը: 0,5 մ.
  13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
 ա/ Պետրոս 1-ինի արշավանքը Մերձկասպյան շրջաններ  
 բ/ Հյուսիսային պատերազմի ավարտը  
 գ/ Թուրքական 3 զորամասերի մուտքը Վարանդա  
 դ/ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի նախաձեռնությամբ տպարանի ստեղծումը Ս. Էջմիածնում  
 ե/ Իվան Կարապետի ժամանումը Արցախ  
 գ/ Օսմանյան բանակի 8-օրյա գրոհը Շուշին գրավելու համար  
 է/ Իսրայել Օրու ժամանումը Շամախի  
 ը/ Չավնդուրի ճակատամարտը  
 թ/ Իսրայել Օրու ժամանումը Սպահան
- |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|   |   |   |   |   |   |   |   |   |
14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. հետախույզ	2. գրահատանկային զորքերի գլխավոր մարշալ
3. 2-րդ աշխարհամարտի առաջին հայ հերոսը	4. Հայրենական պատերազմի առաջին հայ հերոսը
5. ԽՍՀՄ կրկնակի հերոս, օդաչու	6. 89-րդ դիվիզիայի հրամանատար
ա. Նելսոն Ստեփանյան	բ. Լազր Չափաչայան
	գ. Կարապետ Սիմոնյան

դ. Հայկ Հովակիմյան

ե. Նվեր Սաֆարյան

զ. Համազասպ Բաբաջանյան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ 1920 թ. դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան 1-ին համագումարը երկրամասը հռչակեց «Լեռնահայաստան»:
- բ/ 1921 թ. հունիսի 1-ին Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:
- գ/ 1923 թ. հունիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրվեց ինքնավար մարզի կարգավիճակ:
- դ/ Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ կոնֆերանսի նախօրեին՝ 1921 թ. փետրվարի 23-ին, Մուստաֆա Քեմալը հանդիպեց Ստալինին:
- ե/ 1920-1922 թթ. Հայաստանի արտաքին գործերի ժողկոմատը ղեկավարել են Ա. Բեկզադյանը և Ա. Մռավյանը:
- զ/ ՀԽՍՀ խորհուրդների 1-ին ընտրությունները կայացել են 1920 թ. դեկտեմբերին:
- է/ ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի որոշումով խորհրդային հանրապետություններին թույլատրվում էր ստորագրել միջազգային պայմանագրեր:
- ը/ 1921 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հիմնված Հայաստանի օգնության կոմիտեի առաջին նախագահն էր Հովհաննես Թումանյանը
- թ/ 1921 թ. հունիսի 24-ին մտցվեց պարենմասնատրումը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
- ա/ Սասանյան Պարսկաստանի վարչաքաղաքական խոշոր միավորը կոչվում էր մարզպանություն:
- բ/ Գազիկ 1-ինը կրում էր «շահնշահ հայոց» տիտղոսը:
- գ/ Միջնադարում փիլիսոփայությունը հայտնի էր ճարտասանություն անունով:
- դ/ Միջնադարում գանձագին էին կոչում առուվաճառքի ենթակա պետական հողերը:
- ե/ Բագրատունյաց Հայաստանում քաղաքի կառավարիչը կոչվում էր քալանթար:
- զ/ Պարզականքը ժառանգական մասնավոր հողատիրության ձև էր:
- է/ Արշակունյաց Հայաստանում մաղխազը արքունի արարողապետն էր:
- ը/ Մամլուքները մոնղոլական զինվորներն էին:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Լեռն պատմագիտության մեջ ազատական ուղղության հետևորդ էր:
- բ/ Փիլիսոփայության մեջ տարածում գտած մատերիալիստական ուղղության խոշորագույն ներկայացուցիչը Երվանդ Ֆրանգյանն էր:
- գ/ Ռուսաստանում կովկասագիտության երախտավորը Նիկողայոս Մառն էր:
- դ/ Փիլիսոփայության մեջ տարածում գտած գիտապաշտական ուղղության ներկայացուցիչը Գալուստ Կոստանյանն էր:
- ե/ Ընդհանուր լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներ էին Հ. Հյուբշմանը և Ա. Մեյեն:
- զ/ Ստեփանոս Պալասանյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը քառորդ դար ծառայել է որպես դասագիրք:
- է/ Անտոն Գարագաշյանի «Քննական պատմութիւն Հայոց» ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև 5-րդ դարի ավարտն ընկած ժամանաշրջանը:
- ը/ Ֆիզիոլոգիայի բնագավառում մեծ գործ է կատարել ռուս անվանի գիտնական Ի. Պավլովի սան և հետևորդ Հովսեփ Օրբելին:
- թ/ Աստղագիտության բնագավառում հայտնի հետազոտող է եղել ֆրանսիացի գիտնական Խորեն Սինանյանը:

1	2	3

